ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՌԱԿՆԵՐ

1. ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՄԱՐԴ[1]

Մի ծերունի շուրջն հավաքվածներին ասում էր.

—Կյանքն երկու տեսակ մարդ է ստեղծել. մեկը խոտի նման, մյուսը՝ պտղատու ծառի։ Խոտը գարնանը բուսնում, ապրում մինչև աշուն, հետո մնում ձյան տակ՝ կորչում, անհետանում է։ Նա, որ պտղատու ծառի է նման, մարդիկ վայելում են՝ օրհնանք տալիս ծառին ու պտուղ հասցնողին։ Ձեղանից ո՛րն է խոտ, որը պտղատու ծառ, չեմ ասի, գնացե՛ք, ձեզ ու ձեզ վճռեք՝ այն ժամանակ ամեն մեկը կիմանա ինքն ի՛նչ է՝ խո՞տ, թե՞ պտղատու ծառ։

2. ԵՐԵՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՆ

Իմաստունին հարցրին.

—Քանի անհրաժեշտ բան է պետք։

Պատասխանեց.

—Երեք. երկրագործին՝ մաճ, գիտնականին գրիչ, ռազմիկին՝ սուր։ Այս երեքի միացումով է աշխարհը հարուստ, միտքը լուսավոր, կյանքն ապահով։

3. ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՍՔԵՐ

Սողոմոն իմաստունին հարցրին.

—Մանկան ամենամեծ արատը ո՞րն է։

—Համառությունը, որ եթե շարունակվի և արմատավորվի՝ տարեց ժամանակ նրան կդարձնի մի կամակոր հիմար, որից անպակաս կլինեն սխալմունքն ու փորձանքը։

4. ՄԵՋԸՆԿԱՆ

Մի շատ լեզվանի տղա խառնվում էր մեծերի խոսակցությանը։

Հայրը սաստեց.

—Երբ մեծերը խոսում են՝ դու միջը մի՛ ընկնի։

—Ինչ կա որ։

—Էն կա որ՝ լսելով միայն կարող ես մեծերի գործն ու փորձը յուրացնել և անսայթաք զնալ։ Ժողովուրդն ասում է.—Մեծին լսողի ոտքը՝ քարին չի առնի։

5. ՆԱՄԱՐԴԸ

Մի հայ և մի թուրք գնում էին Իբիլիս, երբ հասան Ռահվան[1], թուրքը կանգնեցրեց հային և ասաց.

—Խնլըր գյաուր[2], քեզ պիտի սպանեմ։

—Ինչու՞, ա՜յ մարդ, քիչ առաջ ջրափին՝ իմ հացն էինք ուտում և հանգիստ զրուցում, ի՞նչ պատահեց։

Թուրքը քաշեց հրացանը, նշան առավ և այն է պիտի կրակեր, երբ հանկարծ ճամփորդներ վրա հասան։

—Ինչու՞ էիր ուզում սպանել մարդուն։

—Ես, ես,—կակազեց թուրքը,—ալլահը վկա, հենց այնպես։

—Տղե՛ք,—ասաց ճամփորդներից ավագը, —զենքն առեք, ձախականջի վերի մասը կտրեք, թո՛ղ գնա։ Ինչքան ձեռքը տանի դեպի կտրած ականջը իր նամարդությունը կմտաբերի։

---

[1] *Այստեղ տրվում են այն առակները, որոնք բանահավաքի կողմից ինչ-ինչ պատճառներով Մշո բարբառի չեն վերածված (Ս. Կ.)։*

[1] *Մուշի և Բիթլիսի միջև ընկած անմարդաբնակ տարածություն։*

[2] *Անհավատ խոզ (Ս. Կ.)։*

6. ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍ

Մի տղա աշխատել չէր ուզում, հայրն ասաց.

—Որդի՛ս, վար ու ցանքի ժամանակն է, ես հալից ընկել եմ, դնա վարիր, մի գուցե էն ոսկու կարասը որ կա՝ դո՛ւ հանես։

—Ի՞նչ ոսկու կարաս։

—Ոսկու կարաս, որի մասին մեր պապերն են ավանդ թողել։

Տղան ոգևորված արար վարեց, կալոցի ժամանակ ցորենի շեղջը բարձրացավ սարի պես։ Հայրը ձեռքն երկարացրեց դեպի շեղջը և ժպտալով ասաց.

—Ոսկու կարասն, որ ասում էի ահա՝ է՛ս է։

7. ՍԱՏԱՆԱՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Սատանան կտրեց մարդու ճանապարհը։

—Քա՞նի տարեկան ես,—հարցրեց։

—Մեկ հարյուր՝ գումարած հիսուն։

Սատանան զարմացավ, որ մարդն ապրել է այդքան երկար։

—Այդ ի՞նչպես։

—Ահա թե ինչպես. կյանքում կնոջս երբեք «չէ» չեմ ասել, նույնիսկ այն ժամանակ, երբ ասել է՝ «Դու ո՛չ թե երկու, այլ չորս ոտք ունես»։

Սատանան մատը կծեց, ասաց.

—Ճիշտ են ասել, որ մարդն ավելի սատանա է, քան ինքը սատանան։

8. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԻ ՊԱՐՏՔԸ

Քահանան հոգևորականել էր գյուղացուն, մի օր ասաց.

—Անիծվա՛ծ, էն պարտքդ ինչու՞ չես տալիս։

—Ի՞նչ պարտք, տեր հայր։

—Սուրբ Սարգսի պարտքը։

Գյուղացին ընկավ մտատանջության մեջ, փորփրեց հիշողությունը, վերջը մի եղրի չղալով, ժամանակ խնդրեց, թե գուցե կինը կհիշի պարտքը։

Կինը կռահեց քահանայի հետին միտքը, ասաց.

—Տերտերին ասա՝ պարտքը չենք ուրանում, կտա՛նք, միայն մի պայմանով, որ սուրբ Սարգիսն անձամբ դա ստանա, թե չէ ինքը պարտք կմնա մեզ։